ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Երևանի քաղաքապետարանի «Ջրային կառույցների» ՓԲԸ-ի և «Ավան-Կանաչապատում» ՓԲԸ-ի կարիքների համար վառելիքի ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/82» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան

13.02.2019թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Վաղարշակյան
Հանձնաժողովի անդամներ՝ Բ. Ասլիկյան, Գ. Պապյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Վ. Վաղարշակյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով նախատեսված պահանջներին:

1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակցի կողմից էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերը և իր կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հրավերի հավելվածի 3-ի:

1.3 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնահատականը
1	ՖԼԵԾ ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ - 0:

2. Ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Վ. Վաղարշակյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունած որոշումը՝ գնահատող հանձնաժողովը ընթացակարգի ընտրված մասնակից է հայտարարել «ՖԼԵԾ» ՍՊԸ-ին:

2.2 Հաշվի առնելով, որ ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ անգործության ժամկետ կիրառելի չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Վ. Վաղարշակյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:20-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վ. Վաղարշակյան

Անդամներ՝ ---------- Բ. Ասլիկյան

---------- Գ. Պապյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան